

## ԳԼՈՒԽ Ա ՍԱՍՈՒՆ

Հայոց Յ. թուականին եւ Զրիստոսի թուական 851-ին սաստիկ ճմեռ պատել էր Տարոնոյ գաւառը, դաշտը ձիւնը ծածկել ճերմկցուցել էր բոլորովին, իսկ Սասնոյ լեռը ձեան եւ սառոյցի զանգուած մ'էր ահարկու: Ո՛վ կ'ըսէր թէ այդ բարձրութեան մէջ, այդ սառնամանեաց մէջ կեանք եւ մարդկութիւն կը շնչէին:

Վարը դաշտը՝ Մուշ քաղաքին մէջ մահ եւ լռութիւն կը տիրէին, եւ Տորոսի այդ սարը լի էր կենոք եւ շարժմամբ: Բուքը օդին մէջ շրջմովի կը հոլովէր, մարդ ձիւնեղուն մէջ կ'ելներ, կ'իջներ, կը սողար, կը սահէր եւ այնպիսի եղանակին այնպիսի շարժմունք ընել այն լեռնաբնակ ժողովուրդը միայն կրնար, ժողովուրդ՝ որ ցրտին սաստկութեան եւ ամառուան տաքութեան դէմ միեւնոյն բուրդն զգեստը միայն ուներ եւ այժի մորթէ կօշկածէ օդ ոտից. գարի եւ մանաւանդ թէ կորեակ իրեն հացը կը մատակարարէին, վասնզի այդ բարձրութիւնն եւ ժայռերուն հողի սակաւութիւնն այն միայն կ'ուտար իրենց աշխատութեանց եւ սաստիկ տառապանաց: Իրենց բնաութիւնները հեռի էին ի միմեանց, եւ այդ պատճառաւ շատ անգամ իրարու լեզուն հագիւ թէ կ'իմանային, եւ լեզու թեպէտ հայ, բայց օտարացեալ կը համարուէր ի շրջակայից, եւ թարգմանի կարօտ իմանալի լինելու համար: Եւ այդ սարերու բարձրութեան մէջ ժողովուրդը անբաժանելի ուներ իւր նիզակը, որ իւր զօրութիւնն էր ընդդէմ գազանաց եւ ընդդէմ թշնամեաց եւ ի պաշտպանութիւն իւր իշխանաց, որ ի Մուշ կը նստէին եւ որոց ակնարկութեան անմռունջ կը հնազանդէր տիրասիրութեամբ:

Բայց ի՞նչ էր պատճառ, որ այդ մրկային ժամանակին բոլոր խուք լեռը կը շարժէր: Մուշը արդէն սկսէր էր իջնել, եւ բոլոր սասունցիք կը դիմէին լեռան հիւսիսային կողմը, որ դեպի դաշտ կ'իջներ: Այնտեղ եկեղեցուոյ մը ամաջ կանգնած էին երիտասարդ տղայք եւ տիտուր դաշտին կը նայէին. շատին աչքերը արտասուք կը փայլէր, եւ